

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ԶԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա**

ք. Երևան

«18» հունվարի 2021թ.

«Ջրային կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՄՄԿ ՇԻՆԳՐՈՒՊ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքները հիդրոմեխանիկական կառույցների համար՝ ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրում:

- Թալին ՋՕԸ-ի, Արագածոտն ՋՕԸ-ի, Լոռի ՋՕԸ-ի, Գեղարքունիք ՋՕԸ-ի և Եղեգնաձոր ՋՕԸ-ի սպասարկման տարածքներում  
Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 12 շաբաթ (համաձայն նախագծային փաստաթղթերի):  
աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 132 084 300 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն ութսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

2-ին չափաբաժին 22 369 900 (քսաներկու միլիոն երեք հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

3-րդ չափաբաժին 16 460 000 (տասնվեց միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

5-րդ չափաբաժին 54 150 000 (հիսունչորս միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

7-րդ չափաբաժին 16 559 900 (տասնվեց միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

8-րդ չափաբաժին 22 544 500 (քսաներկու միլիոն հինգ հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 19 812 600 (տասնինը միլիոն ութ հարյուր տասներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսերին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ\***  
 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ»  
 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
 «Թալին» ՋՕԸ տարածքում վերանորոգման աշխատանքների

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը (հազ. դրամ)
1	3	4	5	6	7
<b>Հողային աշխատանքներ</b>					
1	Փոսորակի հանույթ V կարգի գրունտներում	Մ <sup>3</sup>	69.60	1.02	70.99
2	Փոսորակի հանույթ VI կարգի գրունտներում	Մ <sup>3</sup>	69.60	1.20	83.52
3	Փոսորակի հանույթ III կարգի գրունտներում	Մ <sup>3</sup>	46.4	0.58	26.91
4	Փոսորակի հանույթ IV կարգի գրունտներում	Մ <sup>3</sup>	46.4	0.74	34.34
5	Փոսորակի մշակում փափուկ բնահողերում ձեռքով	Մ <sup>3</sup>	18.3	2.6	47.95
6	Հետլիցք տեղի մշակված բնահողերից	Մ <sup>3</sup>	177.1	0.06	10.63
7	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	Մ <sup>3</sup>	11.1	0.08	0.89
8	Ավելցուկային բնահողերի բարձում և տեղափոխում մինչև 3կմ	Մ <sup>3</sup>	62.0	0.67	41.54
9	Ավազակոպճային նախաշերտ խտացումով, h=10սմ	Մ <sup>3</sup>	9.3	7.32	68.06
<b>Ընդամենը</b>					<b>384.83</b>
<b>Բեպոն, երկաթբեպոն, հավաքովի ե/բ, ամրան</b>					
1	Բետոնե հատակ B15, F150, W6	Մ <sup>3</sup>	8.40	74.86	628.82
2	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W6	Մ <sup>3</sup>	16.10	87.58	1410.04
3	Բետոնի նախապատ. շերտի իրականացում B7,5	Մ <sup>3</sup>	5.50	35.04	192.72
4	Ցեմենտավազային շաղախ իրականացում	Մ <sup>2</sup>	15.00	1.91	28.65

5	Ամրան ԱIII	կգ	69.0	1.06	73.14
6	Եր-I Փ4, ք.150x150մմ ամրանային ցանցի տեղադրում	մ <sup>2</sup>	9.7	0.90	8.73
<b>Ընդամենը</b>					2342.10
<b>Սարքեր և սարքավորումներ</b>					
1	Զրաչափական քանոն	հատ	31.0	11.22	347.82
2	Ավտոմատ մակարդակաչափ	հատ	31.0	430.0	13330.00
3	Ավտոմատ հոսքաչափ DN≤400մմ	հատ	1.0	480.0	480.00
<b>Ընդամենը</b>					14157.82
<b>Մեքաղական փարրեր</b>					
1	Թերթապողպատ 4մմ	կգ	4293.0	0.58	2489.94
2	Պողպատ անկյունային 50x50x5մմ-3,77կգ/մ-647,2կգ	մ	171.67	2.10	360.51
3	Պողպատե (St) DN820x8, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	1.4	155.50	217.70
4	Պողպատե (St) DN530x7, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	22.0	72.40	1592.80
5	Պողպատե (St) DN2195x4,5, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	6.2	15.566	96.51
6	Պողպատե (St) DN102x3, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	21.0	4.61	96.81
<b>Ընդամենը</b>					4854.27
<b>Մեկուսացման աշխատանքներ</b>					
1	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	211.7	1.31	277.33
2	Մետաղական տարրերի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	մ <sup>2</sup>	94.3	1.49	140.51
3	Բետոնի արտաքին մակերևույթի երկշերտ հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մածիկով	մ <sup>2</sup>	57.6	1.018	58.64
<b>Ընդամենը</b>					476.48
<b>Մաքրման աշխատանքներ</b>					



1	Կառուցվածքների մաքրում բուսականությունից, քարերից և ջրաբերուկներից, ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով 3կմ	մ <sup>3</sup>	39.0	1.663	64.86
<b>Ընդամենը</b>					64.86
<b>Շինարարական և այլ աշխատանքներ</b>					
1	Փ 100մմ անցքի բացում 20-50սմ բետոնե պատի վրա	տեղ	3	4.070	12.21
2	Փ 100մմ անցքի բացում 10-25սմ ե/բետոնե պատի վրա	տեղ	19	4.07	77.33
<b>Ընդամենը</b>					89.54
<b>Ընդամենը</b>					22369.90
<b>Այդ թվում սարքավորումներ</b>					14157.82

**«Արագածոտն» ԶՕԸ տարածքում վերանորոգման աշխատանքների**

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը (հազ. դրամ)
1	3	4	5	6	7
<b>Հողային աշխատանքներ</b>					
1	Փոսորակի հանույթ V կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	40.3	0.78	31.43
2	Փոսորակի հանույթ VI կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	40.3	0.91	36.67
3	Փոսորակի հանույթ III կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	26.9	0.44	11.84
4	Փոսորակի հանույթ IV կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	26.9	0.57	15.33
5	Փոսորակի մշակում փափուկ բնահողերում ձեռքով	մ <sup>3</sup>	9.4	2.00	18.80
6	Հետիցք տեղի մշակված բնահողերից	մ <sup>3</sup>	88.4	0.04	3.54
7	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ <sup>3</sup>	5.6	0.04	0.22
8	Ավելցուկային բնահողերի բարձում և տեղափոխում մինչև 3կմ	մ <sup>3</sup>	49.7	0.52	25.84
9	Ավազակոպճային նախաշերտ խտացումով, h=10սմ	մ <sup>3</sup>	6.7	5.58	37.39
<b>Ընդամենը</b>					181.06

<b>Ապամոնոփածման աշխատանքներ</b>					
1	Քայքայված բետոնի քանում ձեռքով բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 3կմ	մ <sup>3</sup>	0.5	9.88	4.94
<b>Ընդամենը</b>					4.94
<b>Բեդոն, երկաթբեդոն, հավաքովի ե/բ, ամրան</b>					
1	Բետոնե հատակ B15, F150, W6	մ <sup>3</sup>	5.90	62.92	371.23
2	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W6	մ <sup>3</sup>	15.60	73.61	1148.32
3	Բետոնի նախապատ. շերտի իրականացում B7,5	մ <sup>3</sup>	3.70	29.45	108.97
4	Ցեմենտավազային շաղախ իրականացում	մ <sup>2</sup>	18.70	1.61	30.11
5	Ամրան AIII	կգ	51.2	0.89	45.57
6	Եր-1 Փ4, ք.150x150մմ ամրանային ցանցի տեղադրում	մ <sup>2</sup>	3.5	0.76	2.66
<b>Ընդամենը</b>					1706.86
<b>Սարքեր և սարքավորումներ</b>					
1	Ջրաչափական քանոն	հատ	21	10.66	223.86
2	Ավտոմատ մակարդակաչափ	հատ	21	420.00	8820.0
3	Ավտոմատ հոսքաչափ DN≥400մմ	հատ	1	480.00	480.0
<b>Ընդամենը</b>					9523.86
<b>Մեդաղական փարրեր</b>					
1	Թերթապողպատ 4մմ	կգ	3635.0	0.54	1962.90
2	Պողպատ անկյունային 50x50x5մմ-3,77կգ/մ-622,5կգ	մ	165.1	1.84	303.78
3	Պողպատե (St) DN820x8, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	14.8	107.40	1589.52
4	Պողպատե (St) DN530x7, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	7.8	66.50	518.70
5	Պողպատե (St) DN2195x4,5, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	5.0	14.50	72.50
6	Պողպատե (St) DN102x3, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	14.5	3.19	46.25
<b>Ընդամենը</b>					4493.65
<b>Մեկուսացման աշխատանքներ</b>					
1	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	249.0	1.17	291.33

2	Մետաղական տարրերի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	մ <sup>2</sup>	63.1	1.32	83.29
3	Բետոնի արտաքին մակերևույթի երկշերտ հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մածիկով	մ <sup>2</sup>	44.7	0.90	40.23
<b>Մաքրման աշխատանքներ</b>					
1	Մետաղական տարրերի և խողովակների մաքրում ժանգից և աղտոտվածությունից	մ <sup>2</sup>	78.6	0.92	72.31
2	Կառուցվածքների մաքրում բուսականությունից, քարերից և ջրաբերուկներից, ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով Յկմ	մ <sup>3</sup>	29.7	1.11	32.97
<b>Շինարարական և այլ աշխատանքներ</b>					
1	Փ 100մմ անցքի բացում 20-50սմ բետոնե պատի վրա	տեղ	8	3.688	29.50
<b>Ընդամենը</b>					549.63
<b>Ընդամենը</b>					16460.0
<b>Այդ թվում սարքավորումներ</b>					9523.86

**«Լոռի» ԶՕԸ տարածքում վերանորոգման աշխատանքների**

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը (հազ. դրամ)
1	3	4	5	6	7
<b>Հողային աշխատանքներ</b>					
1	Փոսորակի հանույթ V կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	32.6	1.07	34.88
2	Փոսորակի հանույթ VI կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	32.6	1.26	41.08
3	Փոսորակի հանույթ III կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	21.8	0.60	13.08
4	Փոսորակի հանույթ IV կարգի գրունտներում	մ <sup>3</sup>	21.8	0.79	17.22
5	Փոսորակի մշակում փափուկ բնահողերում ձեռքով	մ <sup>3</sup>	10.6	2.76	29.26
6	Հետլիցք տեղի մշակված բնահողերից	մ <sup>3</sup>	71.0	0.06	4.26
7	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ <sup>3</sup>	12.5	0.07	0.88
8	Ավելցուկային բնահողերի բարձում և տեղափոխում մինչև 3կմ	մ <sup>3</sup>	35.7	0.71	25.35

9	Ավազակոպճային նախաշերտ խտացումով, h=10սմ	մ <sup>3</sup>	5.2	7.647	39.76
<b>Ընդամենը</b>					205.77
<b>Ապամոնտրածման աշխատանքներ</b>					
1	Քայքայված բետոնի քանում ձեռքով բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 3կմ	մ <sup>3</sup>	5.3	11.24	59.57
<b>Ընդամենը</b>					59.57
<b>Բետոն, երկաթբետոն, հավաքովի ե/բ, ամրան</b>					
1	Բետոնե հատակ B15, F150, W6	մ <sup>3</sup>	4.60	79.93	367.68
2	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W6	մ <sup>3</sup>	12.90	93.53	1206.54
3	Բետոնի նախապատ. շերտի իրականացում B7,5	մ <sup>3</sup>	3.60	37.41	134.68
4	Ցեմենտավազային շաղախ իրականացում	մ <sup>2</sup>	35.90	2.04	73.24
5	Ամրան AIII	կգ	54.6	1.13	61.70
